Աշխատանքային տարբերակ

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ՇՊՀ) ակադեմիական շարժունության կազմակերպման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) իրավական հիմքերն են «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները, ՀՀ Կառավարության «Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության կարգը», ՀՀ Կառավարության «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկը» հաստատելու մասին 23.10.2014թ. N 1191-Ն որոշումը, «Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության միջազգայնացման ռազմավարությունը», «ECTS ուղեցույց 2015»-ը, «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Կանոնադրությունը, Արտաքին համագործակցության կենտրոնի Կանոնադրությունը և այլ իրավական ակտեր:

1.2. Սույն Ընթացակարգը սահմանում է ակադեմիական շարժունության ծրագրերի բոլոր տեսակների կազմակերպման և իրականացման գործընթացը, նպատակները, խնդիրները, սուբյեկտների և օբյեկտների պարտականությունները:

1.3. Սույն Ընթացակարգի դրույթները տարածվում են ՇՊՀ ներքին շահառուների (վարչական, պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ կազմ, բակալավրի, մագիստրատուրայի և հետազոտողի կրթական ծրագրով սովորող ուսանողներ) (այսուհետ՝ Շահառու) վրա, ովքեր ակադեմիական շարժունության ծրագրերին մասնակցելու դեպքում կդառնան մասնակիցներ (Մասնակից):

1.4. Ակադեմիական շարժունությունը ուսանելու, դասավանդելու, հետազոտություններ կատարելու կամ որակավորումը բարձրացնելու նպատակով ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ այլ երկրների ուսումնական հաստատությունում ՇՊՀ Մասնակցի կրթական և/կամ հետազոտական աշխատանքների շարունակումն է:

1.5. Բարձրագույն ուսումնական հաստատությունների Շահառուների ակադեմիական շարժունությունը Բոլոնիայի գործընթացի հիմնական սկզբունքներից մեկն է: Շարժունությունը կարևոր գործիք է եվրոպական բարձրագույն կրթական տարածք (ԵԲԿՏ) ձևավորելու, միջմշակութային հաղորդակցման, հաջողված փորձի փոխանակման,

բենչմարքինգի իրականացման, ինչպես նաև ձեռք բերած գիտելիքները, հմտություններն ու կարողությունները նոր միջավայրում կիրառելու համար:

1.6. Սույն Ընթացակարգը, վերջինիս մեջ առաջարկվող փոփոխությունները և լրացումները հաստատում է Համալսարանի գիտական խորհուրդը:

1.7. Սույն Ընթացակարգն ուժի մեջ է մտնում հաստատման օրվանից:

2. Նպատակներ և խնդիրներ

Շահառուների ակադեմիական շարժունության կազմակերպման նպատակներն են՝

- հաստատել ներքին և արտաքին ինտեգրացիոն կապեր համալսարանների հետ և օգտագործել կրթության միջազգային ու հանրապետական ռեսուրսներն ու փորձը, որոնք թույլ կտան բարձրացնել կրթության հասանելիությունը, որակը և արդյունավետությունը,
- ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակներում ձեռք բերված փորձի ներդրման ու կիրառման միջոցով նպաստել կրթական ծրագրերի՝ աշխատաշուկայի պահանջներին առավելագույնս համապատասխանեցմանը:

Շահառուների ակադեմիական շարժունության կազմակերպման խնդիրներն են՝

- բարելավել կրթության որակը և գիտական հետազոտությունների արդյունավետությունը,
- նպաստել աշխատաշուկայում ՇՊՀ շրջանավարտների մրցունակությանը,
- արդիականացնել ՇՊՀ կառավարման համակարգը,
- միջազգային և հանրապետական հաջողված փորձի ուսումնասիրության, յուրացման և ներդրման միջոցով նպաստել Շահառուների մասնագիտական և ընդհանրական կոմպետենցիաների զարգացմանը,
- նպաստել ՇՊՀ միջազգայնացման գործընթացին:

3. Ակադեմիական շարժունության հիմքերը

3.1 Մասնակիցների ակադեմիական շարժունությունը կարող է իրականացվել միջբուհական համագործակցության պայմանագրերի հիման վրա՝ համաձայն միջազգային ու հանրապետական գիտակրթական ոլորտում ՇՊՀ կողմից կնքված համաձայնագրերի, դրամաշնորհային ծրագրերի, նախագծերի, ինչպես նաև ՀՀ ԿԳՄՄՆ կողմից կնքված միջազգային ծրագրերի, արտասահմանյան կրթական, գիտական և հասարակական կազմակերպությունների, գիտաժողովների կազմկոմիտեների և այլ մարմինների կողմից ուղարկված հրավերների և Շահառուների սեփական նախաձեռնության հիման վրա:

3.2 Ակադեմիական շարժունության ծրագրին մասնակցելու նպատակով Մասնակցի և ուղարկող ու ընդունող ուսումնական հաստատությունների միջև կնքվում է եռակողմ համաձայնագիր, որտեղ նշվում են այն դասընթացները կամ ոլորտները, որոնք Մասնակիցները պետք է ուսանեն/դասավանդեն/ուսումնասիրեն ընդունող ուսումնական հաստատությունում:

3.3 ՇՊՀ-ում ակադեմիական շարժունության ծրագրերում մասնակցությունը կատարվում է մրցութային հիմունքներով:

3.4 Մրցույթի իրականացման չափանիշները յուրաքանչյուր ծրագրի դեպքում տեղադրվում են տվյալ ծրագրի կայքում և հասանելի են բոլորի համար:

3.5 Ակադեմիական շարժունության Մասնակցի ընտրությունն իրականացվում է ռեկտորի հրամանով ձևավորված հանձնաժողովի նիստի որոշմամբ: Հանձնաժողովի նախագահը համալսարանի ռեկտորն է, անդամներն են՝ Կենտրոնների տնօրենները, ֆակուլտետների դեկանները, Օտար լեզուների և գրականության ամբիոնի վարիչը, Ուսանողական խորհրդի նախագահը: Եթե հանձնաժողովի նախագահը կամ անդամներից մեկը/մի քանիսը մասնակցում են ակադեմիական շարժունության ծրագրի մրցույթին, ապա, շահերի բախումը բացառելու համար, տվյալ մրցույթին նրանք չեն ընդգրկվում հանձնաժողովի կազմում: Եթե դրա արդյունքում առաջանում է քվորումի ապահովման խնդիր, ապա ռեկտորի հրամանով հանձնաժողովի կազմը ժամանակավորապես համալրվում է այլ անդամներով:

3.6 Մասնակցի՝ ակադեմիական շարժունության մրցույթին մասնակցելու հարցը որոշվում է ուղարկող և ընդունող բուհերի դասընթացների կրթական վերջնարդյունքերի կամ ընտրված ոլորտների համապատասխանության/համադրելիության հիման վրա, ինչն ամրագրվում է կնքվող եռակողմ համաձայնագրում (ուղարկող ու ընդունող բուհեր և Մասնակից): Համաձայնագրի ձևը տեղադրվում է տվյալ ծրագրի կայքում և հասանելի է բոլորին: Ուղարկող և ընդունող բուհերի դասընթացների կրթական վերջնարդյունքների կամ ընտրված ոլորտների համադրելիությունն ու փոխճանաչումը գրավոր հաստատվում է ուղարկող համալսարանի համապատասխան մասնագիտական ամբիոնի վարիչի, ՄԿԾ-ի պատասխանատուի և Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի կողմից: Արտաքին համագործակցության կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) տնօրենը համապատասխան գրությունով իրազեկում է վերոնշյալ աշխատակիցներին, թե ինչ ժամանակահատվածում պիտի ներկայացվի այդ գրությունը:

3.7 Մասնակցության դիմումին կից դիմորդը ներկայացնում է ակադեմիական թերթիկը, օտար լեզվի իմացության վկայականը, հրավիրող կողմի նամակը (վարչական, պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ կազմի համար) և մասնակցության համար պարտադիր այլ փաստաթղթերը, որոնք տեղադվում են ծրագրի կայքում:

Այս կետը վերաշարադրել այսպես – Մասնակցության հայտադիմումին կից դիմորդ-ուսանողը ներկայացնում է նաև հետևյալ փաստաթղթերը (եթե ընդունող համալսարանը ներքոհիշյալներից բացի այլ փաստաթղթեր է պահանջում, ապա՝ նաև դրանք).

- անձնագրի պատճեն,
- ինքնակենսագրություն (CV)՝ Europass ձևաչափով,
- ակադեմիական առաջադիմության թերթիկ (ՄՈԳ),
- օտար լեզվի իմացությունը հավաստող վկայական կամ այլ փաստաթուղթ,
- մոտիվացիոն նամակ,

- ուսումնառության համաձայնագիր (հաստատված համապատասխան մասնագիտական ամբիոնի վարիչի և Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի կողմից):

Կենտրոնը մրցույթի արդյունքում ընտրված Մասնակցին տեղեկացնում է, թե ինչ փաստաթղթեր նա պիտի ներկայացնի մինչև ընդունող համալսարան մեկնելը և վերադառնալուց հետո:

Մասնակցության հայտադիմումին կից դիմորդ-ՇՊՀ աշխատակիցը ներկայացնում է.

- անձնագրի պատճեն,
- ինքնակենսագրություն (CV)՝ Europass ձևաչափով,
- դասավանդման/վերապատրաստման պլանի նախնական տարբերակը՝ հաստատված մասնագիտական ամբիոնի վարիչի և Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի կողմից (մրցույթի արդյունքում ընտրվելուց հետո Մասնակիցը սա քննարկում և վերջնական հաստատում է ընդունող համալսարանի հետ),
- մոտիվացիոն նամակ,
- օտար լեզվի իմացության վկայական կամ այլ փաստաթուղթ:

Կենտրոնը մրցույթի արդյունքում ընտրված Մասնակցին տեղեկացնում է, թե ինչ փաստաթղթեր պիտի նա ներկայացնի մինչև ընդունող համալսարան մեկնելը և վերադառնալուց հետո:

Հավելված 1-ում և Հավելված 2-ում ներկայացված են դիմորդների գնահատման ձևաթղթերը, որոնցում առանձնացված են ընտրության մրցույթի ժամանակ դիմորդին գնահատելու գործոնները: Վերջիններս, բացի օտար լեզվի իմացության գործոնից, գնահատվում են 100 միավորանոց համակարգով: Գործոններից «Հայտի համապատասխանությունը» գնահատելիս հաշվի է առնվում ուղարկող և ընդունող համալսարանների ՄԿԾ-ների, դասավանդման/վերապատրաստման ոլորտների համադրելիությունը: Այս դեպքում, եթե դրանց անվանումներն ամբողջությամբ նույնն են, ապա հատկացվում է առավելագույն 100 միավոր, եթե դրանց անվանումներում կան մասնակի տարբերություններ, ապա հատկացվում է 80 միավոր, եթե անվանումները լրիվ տարբեր են, սակայն նույն են մասնագիտական կրթության ոլորտները/ենթաոլորտները, ապա հատկացվում է 60 միավոր: Իսկ երբ ամբողջովին տարբեր են ՄԿԾ-ները, ոլորտներն ու ենթաոլորտները, ապա գնահատման այդ գործոնին միավոր չի հատկացվում:

3.8 Մրցույթի արդյունքների հրապարակումից հետո դիմորդն իրավունք ունի ուղարկող համալսարանի մրցութային հանձնաժողովից պահանջելու լրացուցիչ մեկնաբանություններ իր գնահատականի հաշվարկման վերաբերյալ: Գնահատականի վերաբերյալ դիմորդի բողոքը կամ անհամաձայնությունն ընդունվում ու դիտարկվում է բուհի ռեկտորի կողմից միայն մրցութային հանձնաժողովի կողմից թույլ տված ընթացակարգային կամ հաշվարկի խախտումների առկայության դեպքում:

3.9 Ուսանողի ակադեմիական շարժունության դեպքում պետք է ներկայացնել ընդունող համալսարանում ուսանելու դասընթացների ցուցակը: - Սա հանել

3.10 Հանձնաժողովի որոշումը մրցույթի արդյունքներն ամփոփելուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնը ներկայացնում է դրանք հրավիրող կողմին, և ակադեմիական շարժունության մասին դրական եզրակացություն ստանալու դեպքում ուղարկող ու ընդունող համալսարանների և Մասնակիցների միջև կնքվում է եռակողմ պայմանագիր, որում ամրագրվում են Մասնակցի և համալսարանների պարտավորություններն ու իրավունքները՝ կապված շարժունության իրականացման, արդյունքների փոխճանաչման, իսկ ուսանողի վերադարձից հետո՝ ուղարկող համալսարանում նրա ուսումնառության շարունակման և ակադեմիական տարբերությունների մարման ժամկետների վերաբերյալ ուսանողնի պարտավորությունների հետ:

3.11 Պայմանավորված ծրագրի տևողությամբ՝ ակադեմիական շարժունությունը կարող է լինել կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ, ինչպես նաև կարող է լինել ներքին (երկրի ներսում՝ այլ համալսարաններ) և արտաքին (երկրից դուրս՝ այլ համալսարաններ):

3.12 Ակադեմիական շարժունության մեջ ներգրավված ուսանողների ուսումնական գործունեության գնահատումը կատարվում է ECTS-կրեդիտային համակարգի հիման վրա՝ համաձայն ՇՊՀ-ում ընդունված համապատասխան կանոնակարգերի:

3.13 Ակադեմիական շարժունության արդյունքում կրեդիտներով արտահայտված կրթական արդյունքների տարբերությունը չպետք է գերազանցի համապատասխան որակավորում ստանալու համար անհրաժեշտ ընդհանուր ուսումնական ծանրաբեռնվածության՝ բակալավրի կրթական ծրագրի 25 տոկոսը, մագիստրոսի կրթական ծրագրի 50 տոկոսը և հետազոտողի կրթական ծրագրի 30 տոկոսը: - Սրա փոխարեն գրել – Ակադեմիական շարժունությանը մասնակցելու իրավունք ունեն բակալավրի առաջին կուրսն ավարտած ուսանողները: Ակադեմիական շարժունության ընթացքում Մասնակիցը պարտավոր է Ընդունող համալսարանում կուտակել համադրելի/փոխճանաչելի առնվազն 12 ECTS-կրեդիտ մասնագիտական դասընթացներից: Եթե ակադեմիական շարժունության արդյունքում կրեդիտներով արտահայտված կրթական արդյունքների տարբերությունը կազմում է 20 և ավելի ECTS-կրեդիտ, ապա Մասնակիցն ուղարկող համալսարանում կարող է վերականգնվել և շարունակել իր ուսումնառությունն այն կիսամյակից, որից մեկնել էր ընդունող համալսարան:

3.14 Ընդունող համալսարանում ուսումնառության ժամկետի ավարտից հետո Մասնակից-ուսանողն իր ուսումնասիրած առարկաների և պարապմունքների ցանկը, ինչպես նաև ստացած կրեդիտներն ու գնահատականները հաստատող ակադեմիական տեղեկանքը պետք է ներկայացնի ուղարկող բուհ՝ ակադեմիական ճանաչման մասին փաստաթուղթը նախապատրաստելու համար:

3.15 Եթե Մասնակից-ուսանողն ընդունող համալսարանում ուսումնառության արդյունքում ունենում է առարկայական տարբերություններ կամ ակադեմիական պարտքեր, որոնց ընդհանուր գումարը քիչ է 20 ECTS-կրեդիտից, ապա դրանց լուծարումը կատարվում է

ուղարկող համալսարանում՝ ըստ Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի կողմից հաստատված ժամանակացույցի:

4. Ակադեմիական շարժունության հետ կապված ֆինանսական հարցերի կարգավորումը

4.1 Ակադեմիական շարժունության մեջ ներգրավված ուսանողները վերադառնալուց հետո պահպանում են ուղարկող համալսարանում իրենց կարգավիճակը՝ ներառյալ ՇՊՀ-ի հետ նախապես կնքված ուսումնառության կազմակերպման պայմանագրում նշված բոլոր իրավունքներն ու պարտավորությունները:

4.2 Երկարաժամկետ կամ կարճաժամկետ ակադեմիական շարժունության ծրագրերում ներգրավված վճարովի համակարգում սովորող ուսանողները չեն ազատվում ուսման վարձավճարից և ուղարկող համալսարանում պարտավոր են վճարել այն կիսամյակի ուսման վարձավճարը, որի ընթացքում նրանք սովորելու են արտերկրում:

4.3 Ակադեմիական շարժունության ծրագրերի ֆինանսավորումը կարող է իրականացվել միջպետական համաձայնագրերով նախատեսված միջոցների, համալսարանի կողմից կնքված դրամաշնորհի, ծրագրի և այլ ֆինանսական միջոցների, ինչպես նաև ուսանողի անձնական միջոցների հաշվին:

5. Ակադեմիական շարժունության մասնակիցների պարտականությունները

Ուղարկող համալսարանը պարտավոր է՝

- ազատել Մասնակից-ուսանողին ուսումնական համաձայնագրում ամրագրված դասընթացների, այլ ուսումնական բաղադրիչների՝ ուսումնական պլանով նախատեսված ամփոփիչ և միջանկյալ ստուգումների, ստուգման այլ ձևերի վերահանձնումից՝ հաշվի առնելով ձեռք բերված կրեդիտները (այդ նպատակով Կենտրոնի կողմից ՇՊՀ ռեկտորին ուղղված զեկուցագրով իրազեկվում է ուսանողի վերադարձի մասին և կից գրությամբ ներկայացվում է ընդունող համալսարանում նրա ստացած ECTS-կրեդիտների ու գնահատականների համարժեքությունը ՇՊՀ-ում գործող ECTS-կրեդիտների ու գնահատման համակարգին),
- Կենտրոնի միջոցով կազմակերպել ակադեմիական շարժունության վերաբերյալ տեղեկատվական և խորհրդատվական հանդիպումներ,
- Կենտրոնի միջոցով կապ հաստատել և պահպանել ընդունող համալսարանի և ակադեմիական շարժունության Մասնակցի հետ՝ հյուրընկալող համալսարանում վերջինիս ուսումնառության ամբողջ ընթացքում,
- Կենտրոնը կազմում է վիճակագրական հաշվետվություն Շահառուների-փոխել, դարձնել՝ ակադեմիական շարժունության ծրագրերի վերաբերյալ յուրաքանչյուր կիսամյակ, ինչպես նաև նույն ժամանակահատվածում անցկացնում է հարցումներ Մասնակիցների

շրջանում՝ պարզելու համար նրանց զոհունակությունը ինչպես Կենտրոնի կողմից ցուցաբերած աջակցությունից, այնպես էլ՝ հյուրընկալող համալսարանից:

- Մասնակից-ուսանողի վերադառնալուց հետո կազմել լրացուցիչ ժամանակացույց՝ առաջացած ակադեմիական տարբերությունների լուծարման համար:
- Համալսարանի կողմից արտոնված ձևերով և ժամկետներում արտասահմանում մասնակի ուսումնառություն անցած շրջանավարտների ավարտական աշխատանքի կամ մագիստրոսական թեզի պաշտպանությունը կարող է իրականացվել ֆակուլտետի (ինստիտուտի, կենտրոնի, դպրոցի) ղեկավարի կողմից առաջադրված և հաստատության ղեկավարի կողմից հաստատված առանձին ժամկետներում:
- Երկու և ավելի հաստատությունների կողմից իրականացվող համատեղ կրթական ծրագրերի շրջանավարտների համար կարող է կազմակերպվել համատեղ ամփոփիչ ատեստավորում՝ հաստատությունների միջև նախապես փոխհամաձայնեցված և համապատասխան պայմանագրով հաստատագրված ընթացակարգերով:
- ակադեմիական շարժունության ժամանակ Մասնակից-ուսանողի կողմից ձեռք բերված լրացուցիչ դասընթացների կրեդիտներն ամրագրել ավարտական վկայականի Հավելվածում:
- Կենտրոնը, ակադեմիական շարժունությունն սկսելուց առաջ, Մասնակցին իրազեկում է սույն Ընթացակարգի մասին:

Մասնակիցը պարտավոր է՝

- ներակայանալ ՇՊՀ՝ ակադեմիական շարժունության համաձայնագրում նշված ժամկետը լրանալուց 3-5 աշխատանքային օր հետո և Կենտրոն ներկայացնել հաշվետվություն իր կողմից կատարված աշխատանքների մասին՝ երկու շաբաթվա ընթացքում,
- Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի հետ երկշաբաթյա ժամկետում համաձայնեցնել ժամանակացույցը և ըստ դրա մարել տվյալ կիսամյակի ուսումնական պլանով նախատեսված ու ակադեմիական շարժունության եռակողմ համաձայնագրում նշված դասընթացներից ձեռք բերած կրեդիտների միջև առաջացած տարբերությունները,
- մասնակցել ՇՊՀ-ում անցկացվող փոխատեղմանը (ռոտացիային)՝ ընդունող համալսարանում ստացած գնահատականներով (վերջիններս համապատասխանեցվում են ՇՊՀ-ի գնահատման համակարգին),
- կապ պահպանել ուղարկող համալսարանի Կենտրոնի հետ,
- վերադառնալուց հետո 3-5 օր հետո ներկայացնել դիմում ռեկտորի անունով՝ իր ուսումնառությունը շարունակելու խնդրանքով՝ կցելով արտերկրում սովորած դասընթացների և ձեռք բերած կրեդիտների ակադեմիական տեղեկանքը,
- ակադեմիական շարժունության Մասնակից-ՇՊՀ աշխատակիցը, մինչև մրցույթին մասնակցելը, կապ է հաստատում ընդունող համալսարանի հետ, որպեսզի քննարկի և հաստատի իր դասավանդման/վերապատրաստման պլանի նախնական տարբերակը՝ մրցութային հանձնաժողովին ներկայացնելու համար,

- ակադեմիական շարժունության Մասնակից-ՇՊՀ աշխատակիցը պահպանում է իր աշխատանքը՝ ներառյալ աշխատանքային պայմանագրում նշված բոլոր իրավունքներն ու պարտավորությունները: Վերադառնալուց հետո, մեկ շաբաթվա ընթացքում նա պետք է Կենտրոն ներկայացնի հաշվետվություն՝ իր կողմից կատարված աշխատանքների մասին,
- ձեռք բերված գիտելիքները, հմտություններն ու փորձը հրապարակային հաշվետվության ձևով ներկայացնել ու տարածել ուղարկող համալսարանի ներքին և արտաքին շահառուների շրջանում՝ Կենտրոնի և մասնագիտական ամբիոնի աջակցությամբ:

Հավելված 1

ԷՐԱՍՄՈՒՍ+ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՎ _____

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

20___-20___ ՈՒՍՏԱՐԻ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

N	ԱԶԳԱՆՈՒՆ	ԱՆՈՒՆ	ՄԱՄՆԱԳԻՏՈՒ-ԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԲՈՒՀ-ում	ՄԱՄՆԱԳԻՏՈՒ-ԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՆՈՂ ԲՈՒՀ-ում	ՀԱՅՏԻ ՀԱՄԱՊԱՏԱՍ-ԽԱՆՈՒԹՅՈՒՆ (100 միավոր)	ՀԱՄԱԴՐԵԼԻ ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՔԱՆԱԿ	ՄՈԳ (100 միավոր)	ՄՈՏԻՎԱ-ՑԻԱ (100 միավոր)	ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԻՄԱՑՈՒԹ-ՅՈՒՆ
1									

_____ _____ 20____թ.

Հավելված 2

ԷՐԱԶՄՈՒՍ+ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՎ _____ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

20__-20__ ՈՒՍՏԱՐԻ

ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ/ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄ

№	ԱԶԳԱՆՈՒՆ	ԱՆՈՒՆ	ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ/ԱՇ-ԽԱՏԱՆՔԻ ՈԼՈՐՏԸ ՇՊՀ-ում	ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ/ՎԵ-ՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈԼՈՐՏՆ ԸՆԴՈՒՆՈՂ ԲՈՒՀ-ում	ՀԱՅՏԻ ՀԱՄԱՊԱՏԱՍ-ԽԱՆՈՒԹՅՈՒՆ (100 միավոր)	ՄՈՏԻՎԱՑԻԱ (100 միավոր)	ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ
1.							
2.							

____ _____ 20___թ.